Զգալ Քրիստոսի սերը

Երեց Տակաշի Վադա
Յոթանասունից

Երբ ես ապրում ու մեծանում էի Ճապոնիայում, դպրոցում ինձ Աստվածաշունչ տվեցին: Աստվածաշնչում անգլերեն և ճապոներեն բառերը գրված էին կողք կողքի: Մեր տնօրենը հանձնարարեց մեզ օգտագործել այն անգլերեն սովորելու համար:

Երբ ես կարդում է այն, սովորում էի Հիսուսի մասին: *Ո՞վ է այս մարդը, ով այնքան լի է սիրով:* Մտածում էի ես: Նրա խոսքերը ինձ ուրախություն էին պարգևում: Ես ցանկանում էի ավելին իմանալ Նրա մասին:

Որոշ ժամանակ անց ես հանդիպեցի միսիոներներին: Նրանք ինձ տվեցին Մորմոնի Գիրքը և խնդրեցին կարդալ ու աղոթել դրա մասին: Ես սիրում եմ Հիսուսի մասին կարդալ նաև Մորմոնի Գրքում: Ես աղոթեցի և զգացի, որ այն ճշմարիտ է:

Իմ ընտանիքում ոչ ոք չէր ցանկանում սովորել Եկեղեցու մասին: Հիսուսն ուսուցանեց, որ մենք պետք է պատվենք մեր ծնողներին, բայց իմ ծնողները չէին ցանկանում, որ ես միանամ Եկեղեցուն: Ինձ համար շատ դժվար էր:

Ես ծնողներիս պատմեցի, թե ինչ էի զգում: Ես ասացի նրանց իմ աղոթքների մասին: Նրանք չէին հասկանում: Նրանք զարմանում էին, թե ինչու էի ցանկանում հեռանալ մեր կրոնից:

Ես շարունակեցի փորձել: Ի վերջո, ծնողներս ասացին, որ ես կարող եմ մկրտվել: Շատ տարիներ անց իմ մայրը նույնպես մկրտվեց:

Ես գիտեմ, որ ես օրհնված էի Հիսուսին հետևելու ցանկության համար: Ես սիրում եմ սովորել Նրա մասին և գիտեմ, որ հետևելով Նրան՝ ես օրհնություններ եմ ստանում: ●

Հեյլի Յանսի հետ անցկացրած հարցազրույցից:

ՆԱՄՈՒԵՐԸ՝ ՆԻԿՈԼԱ ՊԵՏԵՐՍԵՆԻ